

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏՈՒՄ ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ԱԿՈՒՄԲԻ ՆԻՍՏ` ՎՃՈՒՐԵԿ ԲՈՂՈՔՆԵՐԸ ՎԱՐՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼԸ ՄԵՐԺԵԼՈՒ ԽՆԴՐԱՀԱՐՈՒՅՑ ԴԱՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

15.06.2022 12:17



Հարգելի գործընկերներ,

2022թ. հունիսի 13-ին ՀՀ փաստաբանների պալատում տեղի ունեցավ ակումբի նիստ, որի ընթացքում քննարկվեց ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելը մերժելու խնդրահարույց դատական պրակտիկան:

Մասնավորապես, փաստաբանները ներկայացրեցին քննարկվող հարցի հետ կապված իրենց հավաքագրած խնդիրները և առաջարկեցին միասնական մարտավարություն մշակել բարձրացված հարցերը լուծելու համար:

Նիստի ընթացքում արտահայտվեցին փաստաբաններ` Ջոհրակ Ապրեսյանը, Արամ Գրիգորյանը, Ազատ Շահբազյանը, Գեղամ Մարգարյանը, Արմեն Թևանյանը, Միքայել Դանիելյանը, Նարեկ Սամսոնյանը, Հովհաննես Խուդոյանը:

Հնչեցին բազմաթիվ կարծիքներ և առաջարկություններ, այդ թվում` համակողմանի ուսումնասիրություն կատարելու, Վճռաբեկ դատարանի հետ խնդրի առնչությամբ քննարկում կազմակերպելու, անհրաժեշտության դեպքում խնդիրը հանրայնացնելու և օրենսդրական փոփոխությունների առաջարկով հանդես գալու վերաբերյալ:

Քննարկման արդյունքում որոշվեց ստեղծել աշխատանքային խումբ, որը պետք է հավաքագրի անհրաժեշտ տեղեկությունները, կատարի ուսումնասիրություն արժարժված հարցի վերաբերյալ:

Առաջարկվեց աշխատանքային խումբը ձևավորել փաստաբանների հետևյալ կազմով` Գեղամ Մարգարյան, Ջոհրակ Ապրեսյան, Արամ Գրիգորյան, Նարեկ Սամսոնյան, Հովհաննես Խուդոյան և Վարդան Հակոբյան:

Խմբի աշխատանքները կհամակարգի Փաստաբանների պալատի նախագահի առաջին տեղակալ Արմեն Ասատրյանը:

Հարգանքով`

ՀՀ փաստաբանների պալատի ակումբի
համակարգող`

Մարինե Ֆարմանյան

```
Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" &&  
parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })
```